ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2022թ. նոյեմբերի 29-ին կնքված N ՀՀՀ-ՀՄԱԾՁԲ-22/5-1 պայմանագրին լրացում կատարելու մասին

ք. Երևան

05-ը դեկտեմբերի 2022թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա մի կողմից, և

Անուշ Ղազարյան Խորենի Ա/Ձ-ն (այսուհետ նաև՝ Կատարող), մյուս կողմից

Հիմք ընդունելով ՀՀ օրենսդրության պահանջները, ինչպես նաև Կողմերի միջև 2022թ. նոյեմբերի 29-ին կնքված N ՀՀՀ-ՀՄԱԾՁԲ-22/5-1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետի պահանջները, ստորագրեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Կողմերը հանձայնեցին.

1. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին լրացուցիչ մատուցել տպագրական ծառայություններ (այսուհետ նաև՝ Ծառայություններ) համաձայն Համաձայնագրի Հավելված 1-ով նախատեսված ծառայությունների բնութագրի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել պատշաճ մատուցված Ծառայությունները և վճարել դրա համար:
2. Համաձայնագրով սահմանված պայմանները կիրառվում են Կողմերի միջև մինչև դրա ստորագրումը՝ 2022 թվականի դեկտեմբերի 01-ից առաջացած հարաբերությունների նկատմամբ:
3. Կատարողը 1-ին կետով սահմանված Ծառայությունները պարտավորվում է մատուցել և արդյունքը հանձնել Պատվիրատուին մինչև 2022 թվականի դեկտեմբերի 05-ը ներառյալ:
4. Սույն Համաձայնագրով նախատեսված Ծառայությունների ընդհանուր գինը կազմում է 3 342 000 (երեք միլիոն երեք հարյուր քառասուներկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ բոլոր կիրառելի հարկերը, Համաձայն Հավելված 1-ով սահմանված նախահաշվի:
5. Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է Պայմանագրով նախատեսված կարգով:
6. Պայմանագրի ցանկացած դրույթ կիրառելի է սույն Համաձայնագրի նկատմամբ այնքանով, որքանով այլ բան նախատեսված չէ սույն Համաձայնագրով:
7. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:
8. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
9. Սույն Համաձայնագիրը ստորագրված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հ. Մովսիսյան
Գործադիր տնօրեն

Անուշ Ղազարյան Խորենի Ա/Ձ

Անուշ Ղազարյան

Հավելված 1

2022թ. նոյեմբերի 29-ին կնքված N ՀՀՀ-ՀՄԱԾՁԲ-22/5-1 պայմանագրին լրացում կատարելու մասին Համաձայնագրի

№	Ապրանքի անվանում	Քանակ	Միավորի արժեքը	Ընդհանուր գինը
1	Գուլպա սպիտակ	250	1500	375000
		250	1500	375000
2	Գուլպա մանուշակագույն	250	1500	375000
		250	1500	375000
3	Վզկապեր	100	15000	1500000
4	Տիկնիկներ մասնակիցների կերպարով	18	19000	342000

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հ. Մովսիսյան
Գործադիր տնօրեն

Անուշ Ղազարյան Խորենի Ա/Ձ

Անուշ Ղազարյան